# Տեղական Լուրեր

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ

## Քստմնելի ոճիր մը Պալէ գիւղին մէջ եւ Հալէպի գաղտնի ոստիկանութեան լքնահատելի աշխատանքները

## ՀԱԼԷՊԻ ԱՃՌԱԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ականատես մը պատմեց այս տողերը գրողին.— Թէ ինչ գտնուած է շատ մը միջադէպերու մէջ. ներկայ եղած է բազմաթիւ նման պարագաներու. սակայն Հալէպէն եկող այս խումբին և մանաւանդ անոր Պետին (կ՚ակնարկէ գաղտնի ոստիկաններուն և Ճէմալ Պէյին) պէս չեմ հանդիպած խորամանկ խելացի և փորձ պաշտօնեաներու. Անկարգապահ պաշտպանութեամբ և փառք քայլերով յառ ջացան իրենց բոլոր աշխատանքներուն մէջ։ Իրապէս Սուրիան մեր հայրենիքը, հպարտ պէտք է զգայ այսպիսի զաւակներով. երես կը ճանչնան այս պաշտօնեաները. իսկապէս իրար զոհեր են. պետ և ոստիկաններ արժանի են ամէն գնահատանքի։

Ապրի՛ մեր հայրենիքը Սուրիան, ապրի՛ն անոր քաջարի զաւակները։

Ականատեսին այս վկայութիւնները և գնահատանքը մեծագոյն վարձատրութիւն են Ճէմալ Պէյ Ջէրքէզի և մարդոցը աննահանջ ոգւոյն և կամքին։

Պալէ գիւղէն վերադառնալով Ճէմալ Պէյ կը փութայ Իզզէտտին Պէյի մօտ և կը տեղեկացնէ բոլոր իր կատարած աշխատանքները։

Յաջորդ օր կը սկսին մեծ հարցաքննութիւնները. գաղտնի ոստիկանութեան մէջ,

Գաղտնի ոստիկանապետը, անհրաժեշտ կը գտնէ Մուհամմէտը, Հաճ Քասէմի որդին, հարցաքննութեան կանչել կը դիմէ ընդհ. դատախազին, որը կ՚արտօնէ բանտարկեալը տրամադրել Ոստիկանութեան։

Գաղտնի ոստիկաններ, պաշտօնական ձեւակերպութիւնները ամբողջացնելէ ետք կըստանձնեն բանտարկեալը որ ուրիշ մէկը չէր եթէ ոչ Համրայի ամուսինը, և կը բերեն ոստիկանատուն։

Ճէմալ Պէյ, ոստիկաններու ընկերակցութեամբ մասնաւոր սենեակ մը կը կանչէ բանտարկեալը։

Անշուշտ հոս երեւան կուգայ ոստիկանապետին և ոստիկաններուն ճարպիկութիւնն ու բանիմացութիւնը։ Շատ մը փորձեր կ՚իրագործէ Ճէմալ Պէյ, որպէսզի խոստովանեցնէ Համրայի ամուսինը Մուհամմէտը։ Սակայն այս վերջինը միշտ խուսափուկ ու ճարպիկ պատասխաններով կը բրնէր ուղղուած հարցումներէն որով բոլորովին անտեղեակ ու անմեղ կը ձեւանար։

(Շար 5.) Գրի առաւ՝ Թ.Դ.Թ.ԱԿԻՑ ԺԱՎԷՐ

---

ՄՕՏ ՕՐԷՆ... ՄՕՏ ՕՐԷՆ..

## ՕՐՈՒԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԱՆԱԿՆԿԱԼԸ

## «Մարիա Տել Գարմէն»

## ՍՊԱՆԻԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ, ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ

---

Ձեր սինեմայի օրը վերապահեցէք

ԳԵՐՄԱՆԻԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Սինեմայի ցերեկոյթին

ԿԻՐԱԿԻ 29 ՆՈՅԵՄԲԵՐ 1953 ԿԵՍՕՐԷ ԱՌԱՋ ԺԱՄԸ 10.15ԻՆ

Սինեմա «ՕՓԵՐԱՅԻ» մէջ

ՈՒՐ ՊԻՏԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԻ ԵՂԱՆԱԿԻՆ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԺԱՊԱՒԷՆԸ

## ԼՔԵԱԼԸ (LE BATARD)

---

## Տիէքրիս



Փայտի և հանքածուխի ֆրանսական արդիական վառարաններ, որոնք համբաւաւոր են իրենց խնայողութեամբ, շատ դիւրամատչելի գիներով կը վաճառուին։

Ազիզիէ, Հայ. Ազգ. Նոր շէնքին մէջ, Հեռաձայն Թիւ 14268

---

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

## Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆԻ

## «Դէպի աղբիւրը լոյսին» ԿԱՄ «Տիեզերքի առեղծուածը»

Ուր գիտական և իմաստասիրական փաստերով կ՚ապացուցուի Աստուծոյ գոյութիւնը, և կը շօշափուի իմաստասիրական այլ և այլ հարցեր։

Բոլորովին արդիական և հաճելի ոճով հեղինակուած գիրք մը որ պէտք է ամէն մար ունենայ։

Գին՝ 225 ս. ոսկեկան

Ստանալու համար դիմել

Հալէպ.— Մխիթարեան վարժարան, Նամակատուփ 591

Պէյրութ.— Մխիթարեան կեդրոնատեղի, Պուրճ-Համուտ։

---

Ուշադրութիւն Ուշադրութիւն

Սինեմա Հալէպի մէջ 21 դեկտ. էն սկսեալ ներկայացուելիք

## ‹AFFAIR IN TRINIDAD›

ՖԻԼՄԻՆ ԱՌԹԻՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ Է ՄՐՑՈՅՄ ՄԸ



## ՌԻԹԱ ՀԷՅՈՒՐԹ

ՀԱՐՑՈՒՄ,

1.— Ի՞նչու համար Ռիթա Հէյուըրթ վերադարձաւ շարժանկարի աշխարհին։

2.— Ինչու համար Ռիթա Հէյուըրթ կը նախընտրէ կին Ֆարի հետ ֆիլմ դառնել. եւ որոնք են, մի չեւ հիմա անոնց միասին դարձուցած ֆիլմերը

3.— Թուել անունը այն ֆիլմին, որ վ Ռիթա Հէյուըրթ աշխարհահռչակ դարձաւ. եւ ի՞ նչու։

4.— Ի՞նչու համար այս ֆիլմը զունաւոր չէ։

5.— Ո՞րն է Ռիթա Հէյուըրթի վերջին ֆիլմը։

Պատասխանները պէտք է դրկուած ըլլան 28 Դեկտ. էն առաջ ներսէսեան հասցէին.—

CINEMA ALEP CONCOURS «AFFAIR IN TRINIDAD»

ՆՈՒԷՐՆԵՐ

1.— Տարուան մը ձրի տոմս, մէկ անձի սինեմա ՀԱԼԷՊ։

2 — «SOL AMOR» վ ռ տանիզով (1954) ակիոց մը նուիրուած Քուէ—Հագար վաճառատան կողմէ։

3.— Վեցամսեայ ձրի տոմս:

4.— Լուսանկարչական «AGFA» մեքենայ մը, նուիրուած Սարեան Օգեանի վաճառատան կողմէ։

5.— «JUNGHAM. S» ժամացոյց մը, Լուի Ֆիլիփ Ֆրանսեան վաճառատունէն

6 — Կանանց վեց զոյգ գուլպայ «RITA» ապրանքով, Նուվօթէ Մըհրանէն

7.— Եռամսեայ ձրի տոմս։

8.— Երախտագիտութեան արձանագրութիւն ՍԷՐՎԻՍ, B B. վաճառատունէն։

9 — Կանանց ձեռքի պայուսակ, Էր Ֆրանսէն։

10.— Եղունգներու ներկ (DURA GLOSS):

11.— Գեղեցկութեան պիտոյքներ (Lanvin) տուփով մը ակնայի դեղ։

12.— Ամսուան մը ձրի տոմս։

Յ. Գ.— Ամէն անոնք որ կը մասնակցին այս մրցումին, անխտիր նուէր պիտի ստանան Ռիթա Հէյուըրթի զունաւոր մէկ նկարը։

---

## Կարդացէ՛ք ՍՈՒՐԻԱ օրաթերթը

---

ՖԱՔԻՐ—ԱՍՏՂԱԳԷՏ

ՄԱՍՆԱԳԷՏ ՔՆԱՑՆՈՂ ԵՒ ՈԳԵՀԱՐՑ

Քէլլէսէ Պողոսայ, Կարած Խաուուամ

Հեռաձայնի թիւ 12271

---

## ՕԳՆԵՑԷՔ ԱԶԳ. ԾԵՐԱՆՈՑ ՈՒՆՍԵԼՈՆՑԻՆ

---

## ՍԱԿԱՐԱՆ

ԹՂԹԱԴՐԱՄ

| | |
|---|---|
| Տոլար | 356 |
| Սթերլին | 945 |
| Ֆրանսական 1000 Ֆ. անք | 902 |
| Զուիցերիական Ֆրանք | 82,00 |
| Պելճիքական Ֆրանք | 6,50 |
| Եգիպտական | 850 |
| Յորդանանեան | 915 |
| Տինար | 970 |
| Թրքական | 64,00 |
| Լիբանանեան | 109,50 |

ՈՍԿԻ

| | |
|---|---|
| Անգլիական | 34,00 |
| Օսմ. Թիւնարի | 27,30 |
| Օսմ. Րէճատի | 31,50 |